

ԲԱՐՔԱՍԻՆՈՒԹՅԱՆ, ՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ԲԱՌԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Բանասիր. գիտ. դոկտոր ԼԱՎՐԵՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Դ օ ճ

Գործածական է Ղարաբաղի, Հաղրութի բարբառներում¹: Կիրավում է մտքին դօնը բնկնել «մտքերի մեջ խորասուզվել» կապակցության մեջ: Բառը համապատասխան հիմաստով կա Հ. Աճառյանի գավառական բառարանում, բայց առանց ստուգաբանության²: Մեզ հետաքրքրող բառի վերաբերյալ բարբառագետ Ա. Պողոսյանը գրում է. «Դօն գործածական է միայն «մըթկէն դօնը ընդնէլ» «մտքի դօնը ընկնել», այսինքն, մտքի մեջ, մտքերի մեջ խորասուզվել կապակցության մեջ: Դօն բառը, ինչպես կարծվում է, ոչ մի առնչություն չունի: Կտուրն բառի հետ, քանի որ տուն բառը բարբառումս դառնում է տօն, բայց ոչ դօն: Այսպիսով՝ «մտքի դօնը ընկնել»՝ «մտքի տունն ընկնել» ձևով բացատրությունը մնում է չհիմնավորված»³: Այլ կարծիքի է պրոֆ. Ալ. Մարգարյանը: «Իրականում, — գրում է նա, — ինչպես փաստերն են ցույց տալիս, միայն մի դարձվածում գործածվող դօն <դօն բառը ծագում է տուն բառից և հասնողիսանում է դրա բարբառային մի արտահայտությունը, որը և լավագույնս հաստատվում է թե՛ հնչյունաբանորեն և թե՛ իմաստաբանորեն»⁴:

Որպես հնչյունական փաստարկ Ալ. Մարգարյանը նկատի է առնում բարբառում —ն-ծայնորդին հաջորդելու դեպքում տ-ի ձայնեղացումը. հմմտ. տէր-անտէր > անդէր // անդար, բնտրել > քնդրել... և այլն⁵:

Ըստ պրոֆ. Մարգարյանի այդ նույն օրենքով էլ տուն բառը դօն է դարձել և «ձևավորվել իբրև այդպիսին միայն «մտքին տունը (> մըտքէն տօնը // մըտկէն տօնը // մըթքէն տօնը > մըտքէն դօնը // մըտկէն դօնը // մըթքէն դօնը) բառաշղթայի մեջ»⁶:

Որպես հիմաստային-իմաստաբանական փաստարկ՝ ըստ պրոֆ. Մարգարյանի՝ «լավագույն ապացույց տալիս է զրաբարը, որտեղ տուն բառը գործածվելով խորհուրդ («1. մտածություն, տրամաբանություն, 2. դիտավորություն, միտք, հիմաստ, 3. խելք») բառի սեռականի հետ՝ կաղմել է տուն խորհրդով դարձվածք, որ նշանակել է խորհրդարան, այսինքն նաև՝ «Ընդունարան խորհրդով մարդուն, միտք, սիրտ», «Մարդուս խորհելու տեղը, միտք, սիրտ», «Ծարոտ, խորհելու՝ մտածելու տեղը, ուղեղ կամ միտք» և այլն»⁷:

Դօն-տուն աղբյուրի վերոհիշյալ փաստարկներն առատկելի են. նախ չի արդարանում հնչյունափոխական հրնույթի հիմնավորումը միայն մի բառաշղթայի օրինակով, երկրորդ՝ գրաբանության տուն խորհրդոց հղակի օրինակը նշանակում է խորհրդարան (տեղի հիմաստով) հմմտ. «Այլ տուն խորհրդոց շինեցին

1 Բառը կա և Գորիսի տարածքային տարրերակում, որը ուսումնասիրողները համարում են Ղարաբաղի բարբառի ենթաբարբառներից մեկը, իսկ պրոֆ. Ալ. Մարգարյանը՝ առանձին բարբառ:

2 ՏԿՍ Հ. Աճառյան. Հայերեն գավառական բառարան. Թիֆլիս, 1913:
3 Ա. Պողոսյան. Հաղրութի բարբառը. Երևան, 1965, էջ 42—43:
4 Ա. Մարգարյան. Բարբառային բառերի մեկնություններ. — ՊՁ, 1973, № 4, էջ 131:
5 Նույն տեղում:
6 Նույն տեղում:
7 Նույն տեղում:

և հանապազվածք երեք հարիւր և քսան այրի խորհուրդ մտանէին...») Ա. Մայ. Ը. 15)՝: Իսկ խորհրդարան բառի գրաբարյան բառարաններում արձանագրու- ված երկրորդական իմաստները (սիրտ, միտք....) բուն խնդրի հետ այնքան էլ չեն առնչվում:

Կարծում ենք՝ մտէլէ դօնը ընկնել կապակցության մեջ դօն-ը կապ շունի տուն բառի հետ, այն նշանակում է «խորք, հատակ», և կարելի է բխեցնել հ.՝-ն. *bhundhos-ի dhubnos «խոր» տարբերակից, որից հայ. ան-դունդ: Գրա- բարում եզակի վկայությամբ պահպանված այս արմատը բարբառում էլ ներկայանում է դարձյալ եզակի օրինակով՝ դունդ-դուն—դոն-դոն: Իսկ հ.՝-ն. նույն արմատից հայ. միր, ուս. ДНО «խորք, հատակ» բարբառային դոն-ի ակնհայտ զուգահեռներ են:

Քրաժան'արաժան

Բառը առկա է հայերենի մի շարք բարբառներում ու խոսվածքներում՝ «հում կաթի սեր» իմաստով¹⁰:

Ամենայն հավանականությամբ բառը իրանական ծագում ունի, և որպես փոխատու լեզվի զուգահեռ կարելի է նշել միջ. պրս. 𐭒𐭎𐭓𐭕 Իր. *raugna-, պրս. 𐭒𐭎𐭓𐭕 «յուղ» բառերը: Բարբառային քրաժանը չի կարող անցած լինել նոր պարսկերենից, քանի որ նոր պարսկերենից հայերենի բարբառներին անցած բա- ռերում չի գործում ՝(ջ)-ձ հնչյունափոխությունը, և սպասելի չէր նախա- հաղելվածը, ապա և իրան. ր-ն նոր պարսկերենում ու հայերենի փոխառու- թյուններում կներկայանար ո-ով:

Իրանական լեզուներում գործել է ք>ձ հնչյունափոխությունը, իսկ ձ-ով ձևերը հիմնականում բնորոշ են ևղել պարթևերենին. հմմտ. Իր. 𐭒𐭎𐭓𐭕-պարթ. 𐭒𐭎𐭓𐭕 «ղև»-հայ. դրուժան, միջ. պրս. 𐭒𐭎𐭓𐭕-պրթ. 𐭒𐭎𐭓𐭕-«հաղթանակ»: ք>ձ տարբերակներով հայերենում առկա են առլգ-առլժ, առգ-առժ.... որոնք իրա- նական փոխառություններ են¹¹:

Քրաժան'արաժան-ի համար ենթադրելի է 𐭒𐭎𐭓𐭕—*𐭒𐭎𐭓𐭕 քոժան-արա- ժան-(ր) քոժան անցումը: Ինչ միտքներում է *արոժան-արաժան-ի օ-ա ան- համապատասխանությունը, ապա կարելի է ենթադրել, որ եթե այն հայերենի հոգլ մոտ սի կատարվել (որպես տարնմանություն կամ ձայնավորների ներ- քաշնակություն աղլունք), ապա հնարավոր է փոխատու անպիսի աղլուր. որտեղ օ-ի փոխարեն էտե է ա(հմմտ. էր. mag-նաև mog-հայ. մեզ. և ալլն):

Բուրդ ոսպրեռում, եթե արաժան'քրաժան բառի իրանական ծագման փաս- տարենները ոչոտունիկ մենեն, առաջ մաղ շրջանի փոխառություն է, որի դրա- բարում չի ետև կամ դարձարդ չի պահպանել:

Քրամակ ընկնել

Հաճախական է Ղարաբաղի բարբառում և նշանակում է «մարդու շարք անցնել, մարտամեջ մտնել»: Հ. Աճառյանը այս բառը իրավագիտորեն կապում է Խրամ բառի հետ¹², որն իրանական փոխառություն է (𐭒𐭎𐭓-«խումբ, բաղմ- թյուն»):

10 Տե՛ս Գիրք Մակարայեցոց, ըննական բնագիր, աշխատասիրությունը Հ. Ամալյանի. Երևան, 1996:

11 Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. Ա, Երևան, 1971. անդր. և ղ

12 Ա. Աճառյանի. Հայոց բառ ու բան. Վարդաշատ, 1912: Հ. Աճառյան. Հայերեն բաղաձայնական բառարան:

13 Իրան. ր-ն բնորոշ է հյուսիս-արևմտյան իրանական լեզուներին, այդ խմբին է պատ- կանում նաև բարթևերենը, որտեղ ր-ն ձայնում է Իր. *ք-ից՝ հանդես դալով միջ. և հնոժայնավո- բային դիրքում (տե՛ս Основы иранского языкознания, М., 1981, с. 171):

12 Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. Գ, Երևան, 1979. Երա մ բաղլ

Պրոֆ. Այ. Սարգսյանը մերժում է Աճառյանի մեկնությունը և, ըրամակ ընկնելով «արագրության սեղ տեսնելով՝ հրապարակում երևելի լինել, ինչ-որ բանով նույնպես հայտնի դառնալ» նրբիմաստները, գրում է. «որոնք և պարզորոշ ցույց են տալիս, որ այն ոչ թե երամակ (1. «բազմություն, խումբ»: 2. անասունների, ասակապես ձիերի խումբ»), այլ նրաման բառի հրաման? հոգնակի ձևի հետ է կապվում և սերում ուղղակի հրաման՝ ընկնել հարադրությունից»¹³:

Իր ենթադրությունը նա հիմնավորում է հետևյալ փաստաբանությամբ. «Դա, անշուշտ, հիմնավորվում ու պատճառաբանվում է նրամանի բառի հրամանագրի իմաստով, այսինքն՝ նրանով, որ ինչ-որ փաստաթղթով, կարգադրություններ, հրամանով որևէ բանի կամ անձի վերաբերյալ պաշտոնապես որևէ բան է նշվում կամ ազդարարվում»¹⁴,

Պրոֆ. Սարգսյանի փաստարկները համոզիչ չեն. իրանական ԳԱՄ արմատը ունեցել է (գուցե և նախնական) «մարդկանց խումբ, մարդկանց բազմություն» իմաստը (որից հայերենում՝ ումիկ), այդ նույն արմատից երամ, նրամակ կազմություններն էլ ունեն «մարդկանց բազմություն» իմաստը. հմմտ. «...կարգեալ յերամ մատենագիր արքունի դպրացն»¹⁵: Ուրեմն՝ հաշվի առնելով ԳԱՄ արմատի և նրանից կազմված ձևերում «մարդկանց խումբ» «շարք» իմաստը, համապատասխան ըրամակ ընկնել հարադրության մեջ էլ պետք է տեսնել նույն արմատը:

Կ ա ս կ

Իսուր «կարբաղի բարբառում ունի «մեջք, ողնաշար» իմաստը: Բառիս դերբարոդ ստուգաբանական որևէ փորձ մեզ ծանոթ չէ: Թեև հայերենի սարմնի մաս արտահայտող բառախմբի զգալի մասը բնիկ հայերեն է, սակայն այս դեպքում բառի արտաբերման հնչյունական կողմը կարծես դրա օգտին չի խոսում: Ենթադրելի է բառի իրանական բնույթը, սակայն ոչ թե որպես նոր, այլ հին փոխառություն (հին կամ միջինիրանական լեզուներից), որը պահել է միայն բարբառը:

Իրաբարում եզակի վկայությամբ ավանդված է Բաշ բառը, որն ըստ «Արևոտական բառարանի» ունի «մեջք, սնակուշտ» իմաստը: Քաշ-ը համարելով իրանական փոխառություն՝ Աճառյանը որպես զուգահեռներ է նշում պահլ. kas «անութ, կող» պրս. kas «անթամեջ, անթատակ» նաև սանսկ. kaksā «անութ, կես մեջքը» զուգահեռները:

Իսրբառային կասկ և գրաբարյան Բաշ (իրանականից փոխառյալ) բառերի իմաստային համապատասխանությունը ակնհայտ է. ինչ վերաբերում է հնչյունականին, ապա դրանք ևս առկա են, և կարելի է ցույց տալ հայերենի իրանական լեզուներից փոխառված այլ օրինակների, ինչպես նաև իրանական լեզուների բնօրինակ տվյալների վրա:

Նախ՝ կ-Վ-ի մասին: Հայերենի իրանական փոխառություններում կարելի է առանձնացնել նույնարմատ մի շարք բառեր՝ կ-Վ տարբերակներով, ընդ որում, իրանական լեզուներում, հետևաբար և հայերենում, կ-ով ձևերը ավելի հին են, իսկ կ-ի շնչկաղցումը ավելի նոր երևույթ է. հմմտ. kap -նկաև, ապակաևես, նաև՝ Բանդակ, Բանդուկ: [Kausa «կողմ»-հայ. կոյս «կողմ», նաև բուտո «կողմ»]¹⁶:

13 Ա. Լ. Սարգսյան. Ստուգաբանական մեկնություններ. «Բանբեր Երևանի համալսարանի», 1992, № 1—3, էջ 154: 1975 թ. հրատարակված «Պրոֆ. բարբառ» մեծարժեք աշխատության մեջ պրոֆ. Այ. Սարգսյանը համաձայն էր Աճառյանի կարծիքին և ըրամակ ինքն էլ, ըրամակ ինքն էլ էլ բացատրում է՝ երամակ ընկնել՝ մարդու կարգ անցնել (էջ 386):

14 Նույն տեղում:

15 Ղազարյայ ֆարսիցույ Պատմություն հայոց. Երևան, 1982, էջ 28:

16 Այդ իրողության մասին մանրամասն տե՛ս Լ. Հովհաննիսյան. Հայերենի իրանական փոխառությունները. Երևան, 1990, էջ 137—138:

Երկրորդ՝ ս-շ. իրանական փոխառություններում արձանագրվում են նաև այս իրողությունն ամրագրող փաստեր. սեաւ-շաւ, վարս-վարշ (ամակ). քն, որում այս ձևերը ենթադրում են փոխառության տարբեր աղբյուրներ՝ իրանական տարբեր լեզուներ, ինչպես նաև ժամանակային տարբեր հատվածներ: Իրանական լեզուներում առկայանում են նաև sk-sk տարբերակներով ձևեր. Ավեստ. araska -միջ. պրս. arešk «նախանձ», ավեստ. sraska «արցունք» -միջ. պրս. srššk «կաթիլ, արցունք»¹⁷:

Մի խոսքով, բարբառային կասկ-ի հնդիրանական լեզուների հետ ունեցած աղբյուր կարելի է ընդունել՝ հատկապես նկատի առնելով հին հնդ. kakṣa «անութ, մեջքի կեսը»: Կասկ/բաշ զուգահեռներից հնագույնը առաջինն է, որը գրաբարը չի ավանդել:

Տ ա ն ա կ

Ուստյնագործությունը վերաբերող բառ է. «1. ջուլհակի ազբափայտի տակի բարակ գավազան, 2. գործվածք գործելու աղեղնաձև բարակ ճիպոտ»¹⁸: «Արմատական բառարանում» բացատրությունը ավելի կարճ է. «ոստայնի մի փայտը կամ գավազանը»¹⁹:

Այս և տանաւ «կարճ ու հաստ ձեռնափայտ» բառը Աճառյանը ենթադրաբար ձևափոխված է կարծում տանկիսակ «գավազան, մտրակ» բառից, որն իրանական փոխառություն է²⁰:

Տանակ բառի -ակ- ձևույթը ինքնին հուշում է բառի՝ իրանականից փոխառյալ լինելը: Հիշենք, որ գրաբարի ակ-ով վերջացող բառերի զգալի մասը իրանական փոխառություններ են, հատկապես, երբ առանց ստուգաբանական տվյալների բառերի բառակազմական տարրերի առանձնացումը դյուրին չէ. հմմտ. ապաւանդակ, դաստակ, թոշակ, նպատակ, մանուշակ, նեպակ, պխակ և այլն²¹:

Տան ձևույթի արտաքին-հնչյունական կողմն էլ իրանական է: Բավական է նշել, որ «Արմատական բառարանում» բառասկզբի դիրքում այդ ձևույթով երեք բառ կա, երեքն էլ իրանական փոխառություններ են (տանաւ, տանիկ, տանկինակ):

Տանակ, տանկինակ բառերը իմաստային տեսակետից կարելի է աղբյուրել հայ. թակ «ծայրը գունդ գլխով փայտ», որից՝ թակն, թակակովի, թակալ, թակաղակ: Ղարաբաղի բարբառում թակ «թուփ թափելու փայտ», նաև «ծեծ», որից թակէլ «ծեծել»: Թակ-ը ուսումնասիրողները համարում են բնիկ հնդեվրոպական (հ.-ե. *teǵ, կամ *təg-ից):

Թակ բառի հ.-ե. համապատասխան արմատից է թերևս նաև իրանական տան-ը: Եկատի ունենաք, որ իրանական լեզուներում k-ը անցումը արտառոց երևույթ չէ: Իրանագիտությանը վաղուց հայտնի է, որ բազմաթիվ արմատներ առկայանում են k/č տարբերակներով՝ արտացոլվելով նաև հայերենի իրանական փոխառություններում. 𐎧𐎠𐎫𐎡𐎴 «լույս»—հայ. ռոնիկ, պատրուճակ-պատրոյգ/պատրոյկ, 𐎧𐎠𐎫𐎡𐎴 «վազել, հոսել»—հայ. ասպատակ, վտակ նաև տանիկ «արագավազ»:

17 Իրանական զուգահեռները տե՛ս Основы иранского языкознания, с. 41. srššk-srāskā շարքը լրացնում է և հայ. սրսկել-ը, որը դարձյալ իրանական փոխառություն է:

18 Հ. Աճառյան. Հայերեն գավառական բառարան:

19 Հ.. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. տաճկինակ բառահոդվածը:

20 Նույն տեղում:

21 Ուսումնասիրողները -ակ-ածանցը համարում են իրանական, Ըստ Գ. Զահուկյանի «հնարավոր է ենթադրել -ակ-ով կազմությունների բաղադրում հ.-ե. *kon >հայ, -կ(ն) ածանցով բնիկ հ.-ե. բառերի հետ (տե՛ս Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, Երևան, 1988, էջ 8) իրան. և հայ. -ակ- ածանցի իմաստագործական յուրահատկությունների մասին տե՛ս Լ. Հովհաննիսյան. Հայերենի իրանական փոխառությունները, էջ 147—148:

Ուրեմն իրան. tak/tač «խփել» արմատից էլ կազմվել է տաճակ, որը և պահպանվել է Ղարաբաղի բարբառում՝ դարձյալ որպես հնագույն փոխառություն: Ի դեպ, «նոր հայկազյան բառարանը» տաճկինակ «գավազան» ձևին զուգահեռ նշում է նաև տակինակ և տակինակ ձևերը: Աճառյանի կարծիքով սրանցից առաջինը կարող է ստույգ լինել, բայց երկրորդը նշՔ-ի հնարածն է թվում՝ կցելու համար թրք. degenek բառին²²:

Նկատենք, որ մեծավաստակ գիտնականի այս կասկածը տեղին է այնքանով, որ վկայություն չկա, իսկ tak/tač տարբերակը, ինչպես տեսանք, հնարավոր է:

ИССЛЕДОВАНИЕ НЕСКОЛЬКИХ ДИАЛЕКТНЫХ СЛОВ

Доктор филол. наук ЛАВРЕНТИЙ ОГАНЕСЯН

Резюме

В статье исследуются некоторые слова, принадлежащие в основном карабахскому диалекту: դուն «глубина, дно», ср. с рус. «дно». В словосочетании ըրամակ ընկնել «перейти в ряд людей» слово ըրամակ связывается со словами երամ, երամակ «стая, стайка». Слово բրածակ/արածակ «сырые сливки», կասկ «спина, позвоночник», տածակ «палочка ткача» по всей вероятности имеют иранское происхождение и, вероятно, перешли из среднеиранских языков, т. е. являются древнейшими заимствованиями, которых не было в древнеармянском языке.

²² Տե՛ս 2. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, տաճկինակ բառահոդվածը. Ի դեպ, թրք. համարվող degenek հայ. դադանակ բառի իրանական ծագումը բացառելի չէ, որը լրացուցիչ փաստարկ է տաճակ-ի մեր ստուգաբանության հավաստիության համար: